ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ

(Զեկույց Երեւանյան 16-րդ միջազգային խորհրդաժողովում,
Երեւան, 6 հոկտեմբերի 2011թ.)

Գ.Գ. Հարությունյան, ՀՀ ՍԴ նախագահ,
Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի անդամ

Խորհրդաժողովի հարգարժան մասնակիցներ,

Հարգելի հյուրեր,

Սահմանադրական արդարադատության զարգացման ներկա փուլում առավել հրատապ են դառնում սահմանադրական դատարանի որոշումների իրավական նշանակությանն ու հետեւանքներին առնչվող հիմնահարցերը: Դրանք ոչ միայն կարեւորվում են օբյեկտիվ ու սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության տեսանկյունից կամ որպես իրավունքի աղբյուր, այլեւ մեծապես պայմանավորում են պետական իշխանության մարմինների գործառնական փոխհարաբերությունները:

Տարբեր երկրներում այս խնդրի հրատապության աստիճանն զգալի չափով պայմանավորված է սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակով, անհատական դիմումների ինստիտուտի բնույթով, դատավարական մի շարք առանձնահատկություններով:

Այն երկրներում, որտեղ սահմանադրական բոլոր ինստիտուտների ակտերը սահմանադրական վերահսկողության օբյեկտ են, առկա է լիարժեք անհատական դիմումների համակարգ, սահմանադրական դատարանը լուծում է նաեւ իշխանության սահմանադրական լիազորությունների հարցով առաջացած վեճերը եւ ունի Սահմանադրության վերացական մեկնաբանության լիազորություն, առավել հստակ ու որոշակի են սահմանադրական դատարանի որոշումների տեղն ու դերը ներպետական իրավական ակտերի համակարգում:

Վիճակը բոլորովին այլ է այն երկրներում, որտեղ նշված հանգամանքներից որեւէ մեկը բացակայում է եւ սահմանադրական մակարդակում հստակեցված չեն սահմանադրական ու ընդհանուր դատարանների գործառնական փոխհարաբերությունները:

Իրողություն է եւ այն, որ շատ երկրներում իրավական ու սահմանադրական մշակույթը դեռեւս ձեռք չի բերել այնպիսի որակներ, որպեսզի սահմանադրական դատարանի որոշումների իրավական հետեւանքներն ընկալվեն ոչ միայն եզրափակիչ դրույթների շրջանակներում, այլեւ որոշման ամբողջականության մեջ՝ **հաշվի առնելով նաեւ դատարանի իրավական դիրքորոշումների նախադեպային իրավական նշանակությունը:**

Գոնե մեր պրակտիկայում հաճախ ենք հանդիպում այնպիսի պարադոքսի, երբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանին անդրադարձ կատարելիս իրավակիրառական պրակտիկայում գերազանցապես հղումը կատարվում է իրավական դիրքորոշումներին՝ այն դիտարկելով որպես այդ դատարանի նախադեպային իրավունք, սակայն երբ հարցը վերաբերում է սահմանադրական դատարանի որոշումներին, ապա կարեւորվում է հիմնականում որոշման եզրափակիչ մասը: Նման մոտեցումը շատ վտանգավոր է եւ աղավաղում է սահմանադրական արդարադատության էությունը:

Պակաս կարեւոր չէ նաեւ այն հանգամանքը, որ նման պայմաններում լրջորեն վտանգվում է անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արդյունավետությունը՝ հատկապես երբ առկա է սահմանափակ սահմանադրական գանգատի ինստիտուտ:

Փորձեմ հարցը ներկայացնել կոնկրետ օրինակով:

ՀՀ սահմանադրական դատարանը 2011թ. փետրվարի 25-ի ՍԴՈ-943 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության մասով ճանաչեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 6, 18, 19, 93-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր: Բանն այն է, որ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից տարբերվող մեկնաբանությամբ օրենքի կիրառման արդյունքում անձանց խախտված իրավունքները դատական բողոքարկման շրջանակներում, նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով, վերականգնելու հնարավորություն չէր ընձեռվում:

Սահմանադրական դատարանը նման մոտեցում է դրսեւորել նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ՝ 2011թ. հուլիսի 15-ի ՍԴՈ-984 որոշմամբ: Իսկ 2011թ. հունիսի 14-ի ՍԴՈ-975 որոշման եզրափակիչ մասում առաջադրել է այն դոկտրինալ մոտեցումը, որ իրավակիրառական

պրակտիկայում իրավադրույթները չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի սահմանադրական դատարանի կողմից դրանց սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը: Սահմանադրական դատարանի մոտեցումն այն է, որ եթե նույնիսկ իրավադրույթը ճանաչվում է սահմանադրական, սակայն դատարանների կողմից դրանց կիրառումն իրականացվել է այնպիսի մեկնաբանությամբ, որը հակասում է սահմանադրական դատարանի կողմից նորմի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, ապա անձի համար նոր հանգամանքի հիմք է առաջանում եւ գործը պետք է նորոգվի:

Սահմանադրական դատարանը շեշտել է, որ ընդհանրապես վիճարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելիս սահմանադրական դատարանը մեկնաբանելով վիճարկվող իրավանորմերը՝ բացահայտում է դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը՝ **որոշման եզրափակիչ մասում** ճանաչելով այդ նորմերի համապատասխանությունը Սահմանադրությանը կամ համապատասխանությունը Սահմանադրությանը՝ իրավական որոշակի դիրքորոշումների շրջանակում միայն, մատնանշելով.

- իրավական այն սահմանները, որոնց շրջանակներում նորմի ընկալումն ու կիրառումը կապահովի դրա սահմանադրականությունը,

- իրավական այն սահմանները, որոնց շրջանակներից դուրս կիրառվող կամ մեկնաբանվող տվյալ նորմը կհանգեցնի հակասահմանադրական հետեւանքների,

- սահմանադրաիրավական այն չափորոշիչները, որոնց հիման վրա հանրային իշխանության իրավասու մարմինը պարտավոր է ապահովել տվյալ նորմի լիարժեք կիրառման լրացուցիչ իրավակարգավորումներ:

Սահմանադրական դատարանը հիմք է ընդունել այն հիմնարար դրույթը, որ սահմանադրական արդարադատության իմաստը Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության երաշխավորումն է, եւ ոչ մի ընթացակարգային նորմ կամ դրա ոչ հստակ ձեւակերպում չի կարող սահմանադրական գործառույթի իրացման ու իրավունքի գերակայության երաշխավորման խոչընդոտ հանդիսանալ:

Սահմանադրական դատարանը նաեւ փաստել է, որ դատական պրակտիկան, օրենսդրական ներկա ձեւակերպումներից ելնելով, նոր հանգամանք **չճանաչելով** սահմանադրական դատարանի այն որոշումները, որոնց **եզրափակիչ մասում** նշվում է, որ տվյալ գործով սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշում-

ների շրջանակներում է նորմը ճանաչվել սահմանադրական, հնարավորություն չի ստեղծում անձի խախտված իրավունքների եւ ազատությունների վերականգնման ու պաշտպանության համար: Նման որոշումների թիվը տարեկան 4-5-ի սահմաններում է եւ վերաբերում են այն դեպքերին, երբ հակասահմանադրական իրավիճակ առաջանում է **ոչ թե օրենքի բացի կամ նորմի անորոշության, այլ դատական պրակտիկայի կողմից այդ նորմին Սահմանադրությանը հակասող մեկնաբանություն տալով կիրառելու արդյունքում:** Տվյալ պարագայում փակուղի է մտնում իրավունքի գերակայության, հետեւաբար՝ եւ Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը: Սահմանադրական դատարանը գտել է նաեւ, որ այս իրավիճակը ոչ միայն դատավարական օրենսգրքերի, այլեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի առանձին դրույթների անկատարությամբ է պայմանավորված, եւ դրանց համակարգային շտկման անհրաժեշտությունից ելնելով նախատեսել է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված դրույթի ուժը կորցնելը տարաժամկետել:

Առկա խնդրի լուծումն այլ ընթացք կստանար, եթե հիմնավոր կասկածների կամ նորմի անորոշության պայմաններում ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանները կասեցնեին գործի քննությունը եւ օրենքով սահմանված կարգով դիմեին սահմանադրական դատարան՝ իրենց կողմից կիրառվելիք նորմի սահմանադրականությունը գնահատելու համար: ՀՀ Սահմանադրությունը նման հնարավորություն է ընձեռել բոլոր դատարաններին, այդ թվում՝ վճռաբեկ դատարանին: Սակայն մեր երկրում անհատական դիմումների ինստիտուտը ներդնելուց ի վեր շուրջ 100 քաղաքացիների դիմումների հիման վրա նրանց նկատմամբ կիրառված օրենքների դրույթները ճանաչվել են հակասահմանադրական, այն դեպքում, երբ սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր այլ սուբյեկտները, այդ թվում՝ դատարանները, նախապես հնարավորություն ունեին տվյալ հարցով դիմել սահմանադրական դատարան: Ընդորում, առկա են ոչ քիչ դեպքեր, երբ քաղաքացին ընդհանուր իրավասության դատարաններում գործի քննության ընթացքում ներկայացրել է միջնորդություն՝ կասեցնելու գործի վարույթը եւ իր նկատմամբ կիրառվելիք դրույթի սահմանադրականության հարցով դիմելու սահմանադրական դատարան, սակայն միջնորդությունը մերժվել է այն հիմնավորմամբ, որ տվյալ դրույթը համապատասխանում է Սահմանադրությանը: Չխոսելով անգամ նման եզրահանգման իրավաչափության մասին փաստենք, որ հետագայում քաղաքացու սահմանադրական գանգատի հիման վրա քննության ընդունված գործի

շրջանակներում տվյալ դրույթը սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է Սահմանադրությանը հակասող: Այսինքն՝ դատարանների կողմից **հիմնավոր կասկածի համարժեք ընկալում չի եղել:**

Նման իրավիճակ առկա է ոչ միայն Հայաստանում: Դրա հիմնական պատճառը, մեր կարծիքով, **դատական հայեցողության շրջանակների ոչ համաչափ ընկալումն է:** Միջազգային դատական պրակտիկան վկայում է, որ ընդհանուր իրավասության դատարանների համար դատական հայեցողության **երկու սահմանափակում գոյություն ունի.**

1. **իրավավակարգավորումը,** որը ենթադրում է, որ դատարանը որքանով էլ իրավասու է իր իրավական դիրքորոշումներով նպաստել իրավունքի զարգացմանը, միեւնույն է, չի կարող այնաստիճան մտնել իրավակարգավորման դաշտ, որը կփոխի կամ կաղավաղի օրենքի դրույթի իրավական բովանդակությունը: Տեղին է հիշել Իսրայելի Գերագույն դատարանի նախկին նախագահ Ահարոն Բարաքի դիպուկ ձեւակերպումը դատական հայեցողության առնչությամբ, երբ նա շեշտում է, որ տվյալ հասկացությունը ենթադրում է երկու կամ ավելի այլընտրանքներից ընտրություն կատարելու իրավասություն, սակայն այնպիսի այլընտրանքներից, **որոնք բոլորն էլ օրինական են** (Аарон Барак, Судейское усмотрение, М., 1999. С. 13-19),
2. **սահմանադրականությունը,** համաձայն որի ընդհանուր իրավասության դատարանը չի կարող սահմանադրական արդարադատության գործառույթ ստանձնել: Իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը սահմանադրական արդարադատության գերագույն առաքելությունն է, որը դատավարական բոլորովին այլ ընթացակարգեր է պահանջում: Նորմի սահմանադրականության խնդրին առնչվելիս ընդհանուր դատարանը պարտավոր է կասեցնել գործի քննությունը եւ դիմել սահմանադրական դատարան (բնականաբար, երբ նման իրավասությամբ օժտված է):

Երկու դեպքում էլ դատական հայեցողության սահմանների խախտումն իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքի ոտնահարում է եւ անհամատեղելի իրավական պետության չափորոշիչներին:

Ներկայացված հիմնախնդրին բազմիցս է անդրադարձ եղել միջազգային տարբեր քննարկումների ժամանակ: Մասնավորապես, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը /Վենետիկի հանձնաժողով/ 2011թ. հունվարի 17-18-ի 85-րդ լիագումար նիստում, հաստատելով անհատական դիմումների հիման վրա սահմանադրական արդարադատության իրականացման եվրոպական փորձն

ամփոփող զեկույցը, մասնավորապես, արձանագրել է նաեւ, որ երբ սահմանադրական դատարանը որոշակի մեկնաբանության միջոցով սահմանադրականության ապահովման իր գործառույթն իրականացնելիս պարտավորեցնում է պետական բոլոր մյուս մարմիններին նորմատիվ ակտը կիրառել **միայն սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը համապատասխանող ճանաչված որոշակի մեկնաբանությամբ,** նորմատիվ ակտն իրավաբանական ուժից չի զրկվում: ...Սակայն այս հարցում հստակություն մտցնելու համար անհրաժեշտ է այդ խնդիրն օրենսդրորեն կանոնակարգել, **որպեսզի բոլոր պետական մարմինները, այդ թվում դատարաններն առաջնորդվեն սահմանադրական դատարանի կողմից տրված սահմանադրական մեկնաբանություններով,** որը կարող է հիմք ծառայել անհատական դիմում ներկայացնողներին պահանջելու դատարանում պաշտպանել իրենց իրավունքները /Strasbourg, 27 January 2011, CDL-AD(2010)039rev., կետ 165/:

Սահմանադրական արդարադատությանը ներկայացվող արդի հրամայականները պահանջում են սահմանադրական մտածողության ու մշակույթի նոր որակ: Այլընտրանք չունեցող եզրահանգումն այն է, որ **իրավական պետության գերագույն խնդիրն իշխանության եւ ազատության սահմանների հստակեցումն է ու իրավունքի գերակայության երաշխավորումը:** Դա հնարավոր է միայն Սահմանադրության գերակայության երաշխավորման պայմաններում եւ իրական կյանքում սահմանադրական հավասարակշռության երաշխավորման արդյունքում: Դա էր նաեւ հիմնական նախադրյալը վերջին հարյուրամյակում դատական սահմանադրական վերահսկողության նոր կառուցակարգերի ձեւավորման համար: Սակայն նախորդ դարի ծնունդ այս ինստիտուտների դերն ու դերակատարությունը կարող են արդյունավետ լինել, երբ սահմանադրական դատարանների որոշումների իրավական հետեւանքները շոշափելի ու ազդեցիկ լինեն երկրում սահմանադրականության հաստատման առումով: Դա հնարավոր է միայն սահմանադրական դատարանների նախադեպային իրավունքի իրացման անհրաժեշտ ու բավարար նախադրյալների երաշխավորման պայմաններում:

Հասարակական հարաբերությունների սահմանադրականացման արդի մարտահրավերները եւ սահմանադրական մշակույթի զարգացման միտումները վկայում են, որ ներկայումս «սահմանադրական դատարանի նախադեպային իրավունք» հասկացությունը **պետք է ընկալել որպես Սահմանադրության եւ այլ իրավական ակտերի կոնկրետ դրույթների սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ սահմա-**

նադրական դատարանի իրավական դիրքորոշումների ու եզրահանգումների ամբողջություն, որոնք Սահմանադրության ուժով համապարտադիր են, երաշխիք են Սահմանադրության գերակայության երաշխավորման, օբյեկտիվ ու սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության համար եւ հանդիսանում են իրավունքի աղբյուր:

Իրավամտածողության նման հայեցակարգի արմատավորումը, դրա համարժեք ընկալումը պետաիրավական ողջ համակարգի կողմից գործուն երաշխիք կհանդիսանա իրավունքի գերակայության երաշխավորման ու կայուն զարգացման համար:

Շնորհակալություն ուշադրության համար: